Անընկճելի երկիր ԱՐՑԱԽ,

Զինվորը

կամ պարզապես՝ ՍԻՐԱՆՈՒՅՇ մորաքույր

Առյուծն առյուծ է՝ էգ թե որձ·
(ժողովրդական)

Արցախ աշխարհում կա մի գյուղ, որը կոչվում է Հաթերք: Գյուղը մեծ է, շատ մեծ, այնքան մեծ, որ գյուղի ներքևում խոսելիս վերևում չեն լսում, իսկ անծանոթը հազիվ է գտնում իր ծանոթի տունը: Հենց այդ գյուղում մի օր, կարիներ առաջ, ծնունդ եղավ, և ծնված աղջնակի ձայնը շատ քչերը լսեցին:

Իսկ օրը խաղաղ էր, և ոչ ոք չէր կարողանում տեսնել տան շեմին կանգնած մեծ պատերազմների ուրվականները, որոնց կրծքին կարմիր յուղաներկով գրված էր.

1941-1945

1988-19...

Հետո շատ բան փոխվեց: 41-ին շատերը դարձան զինվոր ու գնացին: Ասացին Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք ու գնացին, ասացին՝ մահ թշնամուն, ու գնացին: Գնացին՝ տանը թողած իրենց մանուկներին, ջահել կանանց: Գնացին ու չվերադարձան: Վերադարձան մի քանիսը, վերադարձան ապրելու համար մի նոր պատերազմ, ամենահայրենականը, ամենադաժանը, ամենասուրբը...

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Սիրանույշ մորաքույր, քո ծննդյան օրը շատ քչերը գիտեն: Շատ քչերը, որովհետև դու ամուսին չունես, որովհետև դու միայնակ կին ես (թող ինձ ներեն քո քույրը, քո քրոջ որդին ու հարսը): Եվ երևի ունեցել ես ծննդյան օրեր, երբ քեզ ոչ մեկը չի շնորհավորել, չես շնորհավորել [illegible] իսկ ինքդ քեզ: Հիշու՞մ ես մեր հան[illegible]ությունը խրամատում: Ես ասացի, որ ամեն զինվոր կռվում է իր երեխաների, իր հարազատների համար և որ ամեն զինվորի համար հայրենիքը սկսվում է իր օջախից: Հարցրի՝ ում համար ես կռվում դու, Սիրանույշ մորաքույր: Եվ կարճ, անչափ կարճ էր քո պատասխանը.

- Արցախի բոլոր երեխաները իմ երեխաներն են, բոլորն իմ հարազատներն են, և ես ինձ միայնակ մարդ չեմ համարում:

Սիրանույշ մորաքույր, դու ե՞րբ դարձար զինվոր:

1992-ին թշնամին մտավ նաև Հաթերք: Մտավ ու չէր կասկածում, որ ինքը մի օր ծանր է հատուցելու դրա համար: Չէր կասկածում, երբ տանում էր հնամյա տների պատուհանները, դռները, եղած ապակիները, տանիքների թիթեղը, տանում էր, ու թվում էր մի օր աշխարհի երեսից կանհետանա գյուղը, կդադարի գոյություն ունենալուց... Բայց...

ԲԱՑ ՆԱՄԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սիրանույշ մորաքույր, դա քո ամենասուրբ ճակատամարտն էր: Այդ օրը դու ավելի զինվոր էիր, այդ օրը դու ավելի կին էիր, ավելի թույլ ու ուժեղ: Դու գնում էիր բոլորի առջևից և առաջինը տեսար գյուղը, առաջինը եղար գերեզմանոցում: Ես հասկացա, որ գերեզմանոցը քեզ համար սուրբ է, ինչպես պապենական տունը: Քո հայացքը այդ օրն ասում էր, թե գերեզմանոցը կորցնելը կործանում է նշանակում, թե նահատակները չեն ների, որքան էլ շշնջաս խոստովանության բառեր:

Հետո մեկ-մեկ վերադարձան համագյուղացիներդ, տներում լույս երևաց, ծխացին երդիկները, գյուղամիջում հայտնվեցին ծերունիները, և սկսվեց հին զրույցը աշխարհի ամենաանհասկանալի բաների մասին:

Ձեր տունը նույնպես մնացել էր առանց պատուհանների ու դռների: Բայց թուրքը որտեղի՞ց իմանար, որ տունը այդպես կործանել հնարավոր չէ, որ տան մեջ ապրում է մեր ոգին, որը ամեն վայրկյան կարող է պատուհանի փոխվել, կարող է դառնալ դուռ՝ տիրոջը հավերժ սպասող դուռ...

1988-19... Ե՛րբ է ավարտվելու պատերազմը, ո՛վ է լինելու վերջին զոհը, ո՛րն է լինելու պատերազմի վերջին օրը: Թվում է վերջ չի լինի այս ամենին, թվում է հուղարկավորություն կլինի ամեն օր, և մահը կդառնա սովորական երևույթ...

Ամեն ինչ կլինի պատերազմի օրենքներին համապատասխան:

Արդեն հարսանիքներ էլ են լինում մեր աշխարհում: Մարդիկ փորձում են պարել, փորձում են մի քիչ ուրախանալ, բայց չի ստացվում: Ամեն ինչ մի տեսակ կիսատ է մնում: Սարսափելի է, ծիծաղը ծիծաղի նման չէ: Պարը ավելի շատ տառապյալի՝ դեռևս չիմաստավորված շարժումներ է հիշեցնում, երգը հոգնեցնում է:

Բայց ամուսնանում են զինվորները: Եվ վերջին տարում Արցախում ավելի շատ երեխաներ են ծնվել, ավելի շատ տղաներ: Դա էլ է պատերազմի օրենքներին համապատասխան:

Հիշում եմ, առաջ մեր քաղաքում ընդամենը մի քանի հենակավոր կար: Հիմա շատ են նրանք՝ երիտասարդ հենակավորներ: Մի տեսակ չես կարողանում հավատալ, չես կարողանում նայել, չես կարողանում չնայել: Նրանց հանդիպում ես ամեն օր: Իսկ նրանք գեղեցիկ են նաև այդպես, նրանք այդպես էլ ուժեղ են ու հպարտ: Նրանք ամեն վայրկյան անձայն հիշեցնում են, որ դժվար է հասկանալ, թե ինչ է հայրենիքը...

ԲԱՑ ՆԱՄԱԿ, ՈՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԿԱՐԴԱԼ ԲՈԼՈՐԸ

Սիրանույշ մորաքույր, քո մազերը ճերմակել են վաղուց: Կանրծես ճերմակել են երկրորդ անգամ ձյուն ձյան վրա: Քեզ երբեք կանացի շորերով չեմ տեսել:

- Դու չե՞ս վստահում տղամարդկանց, որ զենք ես վերցրել, -, հարցրի ես և դու պատասխանեցիր.

- Մեր տղամարդկանց հնարավոր չէ չվստահել: Նրանք ուժեղ են, հավատարիմ, անվախ, բայց, ինձ թվում է, առանց ինձ ինչ-որ բան պակաս կլիներ: Վերջապես, թող անհամեստություն չլինի, ես կարծես մոտեցնում եմ հաղթանակը: Առանց ինձ, կարծում եմ, դժվար կլիներ:

Ոչ, դա անհամեստություն չէ: Դու կարծես ինչ-որ անհասկանալի ու անբացատրելի կախարդանքով պարուրում ես նրանց: Եվ քո աներեր ու հպարտ պահվածքը քեզ երկրպագելու ցանկություն է առաջացնում: Թվում է, եկել ես Ավարայրից, եկել ես պատմելու փափկասուն տիկնանց մասին, եկել ես համեմատելու պատերազմները, եկել ես ասելու, որ այս մեկը շարունակությունն է 1542 տարի առաջ եղածի:

... Ես վաղուց էի ուզում քեզ ասել, որ պատերազմը միայն ու միայն տղամարդու գործ է, որ կինը պատերազմի հետ ոչ մի գործ չունի, որ կնոջ քնքշությունը ես չեմ կարողանում պատկերացնել խրամատի գորշության մեջ: Ուզում էի ասել, բայց չէի համարձակվում, դու կվիրավորվեիր:

Գիտեմ, դու արդեն կարոտում ես քո կանացի շորերին: Շատ կուզեիր ազատվել զինվորական շորերի կաղապարից ու երկար ընդմիջումից հետո զգալ կանացի հանդերձների ողջ քնքշությունը:

Ես քեզ կուզեի տեսնել խոհանոցում, տանը, այգում, առանց զենքի, կուզեի տեսնել հարսանիքներում, և ուրախությունդ լիներ ուրախության նման, պարդ լիներ իսկական, ծիծաղդ՝ ամբողջական:

Դու սիրում ես ուրախանալ...

Ուրեմն Հաթերք գյուղի մասին: Մարդիկ արդեն հավաքում են բերքը: Բոստաններում ամեն ինչ կա: Սոված չես մնա: Կարելի է հյուրերն ընդունել ու չամաչել: Իսկ հեռվից եկածներին հնարավոր է նույնիսկ զարմացնել սեղանի առատությամբ: Գյուղում դպրոց էլ կա: Բայց գյուղացիներին մտահոգում է օտար լեզվի մասնագետի պակասը: Ասում են երեխաները անպայման պիտի անգլերեն խոսել սովորեն: Բա ինչպե՛ս...

Անգլիայից գալիս են, Գերմանիայից գալիս են, Ֆրանսիայից գալիս են, անընդհատ գալիս են: Նրանց հետ խոսել պետք է, չէ՞: Իհարկե, պետք է: Թող մի թարգմանիչ էլ Հաթերքում լինի: Երևանում կա՞, կա: Ստեփանակերտում կա, իհարկե, այն էլ մի քանիսը: Հաթերքը ինչո՞վ է պակաս: Մեծ էլ գյուղ է,10-15 թուրքի գյուղ միասին այդքան չեն լինի: Մի խոսքով, կոլվարչության նախագահ պիտի լինի, գյուղական խորհրդի նախագահ՝ նույնպես, վաշտի հրամանատար, դպրոցի տնօրեն, ֆերմայի վարիչ և... թարգմանիչ:

Իսկ այդ նույն Հաթերքում յուրաքանչյուր երեխա գիտի, թե քանի մարտի է մասնակցել Սիրանույշ Առուշանյանը, թե քանի անգամ է գնացել հետախուզության, թե քանի անգամ է հայտնվել թշնամու թիկունքում, քանի անգամ է վիրավորվել, քանիսին է սպառնացել, քանիսին է օգնել վերադառնալ, քանիսին է փրկել:

Եվ զարմանալի չէ, որ Սիրանույշ Առուշանյանը ճանաչում է շրջանի յուրաքանչյուր զինվորի, գիտի յուրաքանչյուրի մասին, ծանոթ է յուրաքանչյուրի թուլությանն ու ուժին: Դրա համար էլ մեկը.նրան Սիրանույշ աքա է ասում, մյուսը՝ Սիրանույշ մորաքույր, մեկն էլ՝ պարզապես Սիրանույշ:

ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿԸ

Սիրանույշ մորաքույր, արդեն աշուն է: Օրերը կրճատել են: Դժվար է կանգնել խրամատում: Տղաներն էլ հոգնած են: Կարծես մոտ է պատերազմի վերջը: Բայց ոչ ոք դրան չի հավատում, ասում են՝ այս պատերազմը այսքան շուտ ավարտվողը չէ: Դու նույնպես այդպես ես մտածում: Ես էլ եմ այդպես մտածում:

Իսկ եթե չավարտվեց, տղաները կմոռանան հոգնությունը, և նրանց էլ պահել չի լինի: Դու տղաներին լավ ես հասկանում, Սիրանույշ մորաքույր, շատ է դժվար:

Համոզված եմ, այս անգամ քո ծննդյան օրը կհիշեն շատերը, շատերը կգան քեզ շնորհավորելու, և գուցե ես կլինեմ առաջինը...

ՆՈՐԵԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Արցախ